ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.04.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-12/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-12/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի կողմից 08.04.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-12/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 17.03.2014թ. N 01/10-54 գրությամբ «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-2» ծածկագրով ընթացակարգի հրավերը ուղարկել է «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին:

«Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ն 27.03.2014թ. գնային առաջարկ է ներկայացրել NN 1-5 չափաբաժինների մասով, որոնք համապատասխանել են «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հրավերով սահմանված դեղերի տեխնիկական բնութագրերին:

Հայտերի բացման նիստի ժամանակ «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թվով 5 չափաբաժիններից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է հանդիսացել NN 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, սակայն պատվիրատուի 27.03.2014թ. արձանագրության համաձայն ընտրված մասնակից (առաջին տեղը զբաղեցրած մասնակից) է ճանաչվել միայն N 3-րդ չափաբաժնի մասով:

Ընկերության հայտը մերժվել է NN 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով՝ 27.03.2014թ. կազմված արձանագրության 6-րդ կետով նշված պատճառաբանությամբ, իսկ նշված արձանագրությունը Ընկերությունը էլեկտրոնային փոստով ստացել է 03.04.2014թ.:

«Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովի որոշումը չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության և հրավերով սահմանված պահանջներին, քանի որ ընկերության իրավունքները խախտվել են հետևյալ փաստական և իրավական հիմնավորումներով՝

ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 110-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են ընտրված և 2-րդ ու 3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները: Հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն պարտավոր էր «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ին NN 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով ճանաչել հաղթող՝ ընտրված մասնակից, քանի որ ընկերության կողմից նշված չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկը էական տարբերվում է մյուս մասնակիցների գնային առաջարկից և համապատասխանում է պատվիրատուի կողմից հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

«Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ն նշել է նաև, որ «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-2» ծածկագրով գնման ընթացակարգին ընկերության կողմից ներկայացված դեղերը գրանցված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված դեղերի պետական գրանցամատյանում, որը հիմք է հանդիսանում վստահ լինելու դեղերի որակի մասին:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ մասով և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 110-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել պատվիրատուի կողմից 27.03.2014թ. արձանագրված որոշումը և պարտավորեցնել պատվիրատուին «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ին որպես հաղթող՝ ընտրված մասնակից, ճանաչել նաև ընթացակարգի NN 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով:

«Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ն 09.04.2014թ. Կենտրոնին ուղղված գրությամբ խնդրել է իր կողմից 08.04.2014թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

2. ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 16.04.2014թ. N 04/032-707 գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 08.04.2014թ. «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 18.04.2014թ. N 01/10-86 գրությամբ «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում NN 1-ին և 4-րդ չափաբաժինների (1-ին չափաբաժին՝ գեմցիտաբին՝ լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթ 1000 մգ, ապակե սրվակ և 4-րդ չափաբաժին՝ գեմցիտաբին՝ դեղափոշի, ն/ե ներարկման լուծույթ 200 մգ, ապակե սրվակ) մասով նվազագույն գնի առաջարկ է ներկայացրել

«Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ն՝ «Դերցին» առևտրային անվանումով հնդկական արտադրությամբ «Գեմցիտաբին» դեղի համար:

ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն տեղեկացրել է, որ 2012թ. «Դերցին» դեղը (դարձյալ հնդկական արտադրությամբ) գործածվել է որոշ օրգանների չարորակ նորագոյացություններով 13 հիվանդների բուժման գործում, սակայն նրանցից 11-ի մոտ քիմիաթերապևտները ստիպված են եղել դադարեցնել՝ դեղի ներարկումից կողմնակի երևույթներ ու բաղադրություններ առաջանալու պատճառով: Այդ մասին զեկուցագիր են ներկայացրել ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրինությանը, ինչի պատճառով դադարեցվել է «Դերցին» դեղի ձեռքբերումը և գործածումը: Հաշվի առնելով դեղի օգտագործման ժամանակ առաջացած կողմնակի երևույթները ու բարդությունները բժիշկները հրաժարվում են դեղի գործածումից: Ավելին, հիվանդները ելնելով իրենց իսկ սեփական փորձից և մտավախություն ունենալով, որ դեղը օգտագործելու ժամանակ հնարավոր է նրանց մոտ առաջանան տարատեսակ բարդություններ, հրաժարվում են այդ դեղից:

ՀՀ առողջապահության նախարարի 26 սեպտեմբերի 2012թ. թիվ 2148-Ա հրամանի «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի շրջանակներում իրականացվող ծառայությունների փոխհատուցումը 2012թ. հոկտեմբերի 1-ից իրականացվում է համավճարային եղանակով: Այսպիսով, հիվանդների հրաժարվելը տվյալ դեղից նաև առաջացնում է ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի համար մեծ ֆինանսական վնասներ, քանի որ համավճարը ենթադրում է, որ հիվանդը այդ դեպքում ինքը պետք է վճարի դեղի գումարի որոշ տոկոսը:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ եթե ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն հաշվի առնի «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի կողմից «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացրած նվազագույն գնի առաջարկը և որպես հաղթող ընտրված մասնակից ճանաչի տվյալ կազմակերպությանը, ապա բուժհիմնարկը պետք է գնի մի դեղ, որն առաջին՝ հակառակ իր նշանակությանը վնաս է հասցնում հիվանդի առողջությանը, երկրորդ՝ այդ դեղը պահանջված չէ հենց հիվանդների կողմից: Հետևաբար, հատկացնելով բավականին

մեծ ֆինանսական միջոցներ «Դերցին» դեղի ձեռքբերման համար բուժհիմնարկը չի կարողանա յուրացնել այն: ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն նպատակ ունենալով հիվանդներին տրամադրել արդյունավետ բուժօգնություն և խուսափել աննպատակ ֆինանսական միջոցների վատնումից NN 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով մերժել է «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ին՝ «Դերցին» առևտրային անվանումով հնդկական արտադրությամբ դեղի համար ներկայացրած գնային առաջարկը, որը նաև բխում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներից, որտեղ ամրագրված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակը:

3. ԳԲԽ-12/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի կողմից 08.04.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

4. ԳԲԽ-12/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-12/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն) ուսումնասիրելով «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 08.04.2014թ. ներկայացված բողոքը, «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.03.2014թ. կայացած նիստի N 2 արձանագրությունը, ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին ներկայացրած 18.04.2014թ. N 01/10-86 գրությունը, ինչպես նաև գրությանը կից փաստաթղթերը և 28.04.2014թ. N 01/10-97 գրությունը հայտնում է հետևյալը.

ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Հանձնաժողովը 27.03.2014թ. կայացած նիստի N 2 արձանագրության 6-րդ կետով մերժել է «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ Ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով:

«Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ն 08.04.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել Պատվիրատուի կողմից 27.03.2014թ. N 2 արձանագրության ընդունված որոշումը և պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ին որպես հաղթող՝ ընտրված մասնակից ճանաչել նաև ընթացակարգի NN 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով:

Սակայն «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ն 09.04.2014թ. Կենտրոնին ուղղված գրությամբ դիմել է Կենտրոնին՝ խնդրելով Ընկերության կողմից 08.04.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 28.04.2014թ. N 01/10-97 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել Հանձնաժողովի 26.04.2014թ. ժամը 12:00-ի նիստի արձանագրության պատճենը, որի համաձայն Հանձնաժողովը որոշում է ընդունել Ընթացակարգը՝ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի կողմից 08.04.2014թ. բողոքով Կենտրոնին ներկայացված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 27.03.2014թ. N 2 արձանագրությամբ ընդունված որոշումը դադարեցնելու և ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին՝ «Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ին ընթացակարգի NN 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով որպես հաղթող մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու մասին պահանջը բողոքի քննության ընթացքում դարձել է առարկայազուրկ, քանի որ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունելը Պատվիրատուն կայացրել է որոշում

գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին, ինչպես նաև հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լամբրոն-Ֆարմիմպէքս» ՍՊԸ-ի կողմից 08.04.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Լուսինե Ոսկանյան

Անդամ՝ Երանուհի Սամվելյան